

ESTELLE
23 3 10
8-9
S. 111

ՔԱՏԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|-------------------|--------|
| Պոչկարիոյ համար | |
| Տարեկան | 12 ծր. |
| Վեցամսեայ | 6 » |
| Արտասահմանի համար | |
| Տարեկան | 15 » |
| Վեցամսեայ | 8 » |
| Ամերիկայի համար | |
| Տարեկան | 3 ծր. |
| Վեցամսեայ | 1.50 » |
| ՎՃԱՐՆԵՐԸ | |

Վերստիստի սոյր առաջին երեսին համար 40 սակերիս է. իսկ վերջին երեսին համար 20 սակերիս է. երեքեկ անի սակերիսերու համար 20 ՊՈ զեղը կըլայ:

Պոչկարիոյ համար ձեռքի (15 ՄԱՆԹԻՄ)

ՇՆԱԲԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐՈՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՆԵՐԻՆ ԵՒ ՇՆԱԲԻՍ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ զրկել
Խմբագրութեան հասցիին

Редакция на вестникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Կրօնքիսիս եւ չեմ տրուի
Արտասահմանի համար ձեռքի (20 ՄԱՆԹԻՄ)

Meditharistangasse W.
Vienne

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բաժանորդներէն, որոնք վճարած չեն, կը խնդրենք անյայտ զրկել բաժանորդները, որովհետեւ առաջին վեցամսեան լրացաւ. Բաժանորդները պէտք է հասկնան որ թերթը ստակով կելայ:

ԻՆՉ ԸՆԵՆ

Անցած տարի էր՝ հայրենիքէն եկած տխուր լուրերուն վրայ գրեցինք այս սինակներուն մէջ. «Ինչ պիտի ընէ արտասահմանը»:

Տարին անցաւ. արտասահմանը հայրենիքի ցաւերուն օգուտ բերող բան մը, շարժում մը չըրաւ. Ինչ կըսեմ, ձեռքերնուս եկած ըրինք ժողովրդին ու շարժութիւնը հայրենիքի գոթախային կեանքէն փոխադրելու անկարելիութիւնը անկարելիութիւնը վրայ. մոռցանք բուն վերքը, հայութիւնը սպառող, անոր ներքին ուժերը ցամքեցնող փրփուտախոր, և արուեստական միջոցներով թմրեցանք ու թմրեցուցինք ժողովուրդը:

Մեր այս անհոգ անտարբերութենէն ու կոյր իրարանցումէն անդին սակայն առկախ մնացու կը մնայ միշտ հայրենիքի մէջ հայութեան գլխուն՝ սարսափներու սուրբ: Թուրքը կը շարունակէ միշտ գործադրել իր հայալինջ ծրագիրը, և ինչպէս կը տեղեկացնեն մեզ ձեր Պոլսոյ թղթակիցն ու հեռագիրները, հոս գիւղեր կաւերեն, հոն կը կոտորեն անխնայ, ասդին կառուանգեն, անդին կը պղծեն, և այս տեղեկութիւններն անշուշտ կատարուածներուն մէկ հազարերորդն անգամ չեն:

Ու թուրքիոյ այս գոթախային կեանքին մէջ, այս անտանելի տառապանքներուն տակ ապրող ու հեծող հայութիւնը, ալ յուսահատած բան մը սպասելէ ար-

տասահմանի մէջ հանգիստ ապրող, մեծ մեծ ջարդող իր եղբայրներէն, ու անկարող իր կաշին քերդող, իր ոսկորները կտորտող հալածանքներու գիմանալու, պիտի խորհի անշուշտ միջոց մը անոնցմէ ազատելու և կամ անոր մէջ իր վերջին շունչը փչելու:

Մենք որ սովոր ենք միշտ շարժում մը, գործ մը քննադատել կատարուելէն և առած արդիւնքէն շատ ետքը, առանց սակայն անոր յառաջընթաց պայմաններն և պատճառները սերտելու, մենք որ կըսեմ մեր կուսակցական պղտոր ակնոցներով զինուած մեր անհատական հաշիւներով կը դատենք ու կը գունաւորենք իրերն ու եղելութիւնները, ինչ կը մտածենք արգեօք հայրենիքի մէջ ապրող այդ շարատանջ հայերու մասին:

Ինչ պէտք է ընէ հայ էրիկ մարդը, երբ կը տեսնէ որ թուրքը սանձարձակ կը մտնէ իր սուրը և իր կինը կամ աղջիկը կը պղծէ:

Ինչ պէտք է ընէ հայ այրին, երբ կը տեսնէ որ իր էրիկը ըսպաննող դահիճը հիմա ալ կուգայ իր պատիւը սպաննելու:

Ինչ պէտք է ընէ իր պատան մը չոր հացին համար աշխատող հայ գիւղացին, երբ կը կը տեսնէ որ հանդիպակաց գիւղը կայրուի և գիւղացին կը սպաննուի:

Ինչ պէտք է ընէ հայ առաջնորդը, երբ կը տեսնէ որ իր շուրջը կատարուած անլուր խրժողութիւններուն դէմ ըրած բողոքը անլսելի կը մնայ, և ինք դատապարտուած է յաւիտենական հանդիսատեսն ըլլալ անոնց:

Իրար եկէք ով մեծ քաղաքագէտներ, սեղանի մը շուրջը խմբուեցէք ով ազգին մեծագոյն խոհեմ անձնաւորութիւնները, պահ մը վար գրէք ձեր ծանրածանր գրիչը, և թօթուեցէք վրանուդ ձեր գիւնանգիտական շպարները, ու հայրենիքի այս անտանելի ներկան աչքերնուդ առջեւ բերէք ու ըսէք, ինչ ընէ հայը հայրենիքին մէջ:

Գիտեմ որ դուք բոլորովին անտարբերներ չէք հայրենիքէն

եկած ազիզորմ ձայներուն, և այսօր դիտակներդ բարձրացուցած և խոշորացոյցներդ սրած, այդ բոլոր աղէտներուն մէջ կը փնտռէք կուսակցականի մը մատը, յեղափոխական երանգ մը. ձեր կոյր ու կատաղի թափովը անոր վրայ խուժելու համար:

Բայց պահ մը մոռցէք ձեր այդ սիրական զբաղումն ու ըսէք:

Հայ կինը պէտք է համբերութեամբ տանի իր վրայ գործադրուած ամէն բռնութիւն, թէ կուտրէն կը միտար մը կամ գետնէն քար մը առած գիմաւորէ իր դահիճները:

Հայ գիւղացին պէտք է շարունակէ խոհեմութեամբ ու լռիկ մորթուիլ. թէ բահը կամ մահադը բարձրացուցած գիմաւորէ իր դահիճներուն:

Հայ Առաջնորդը որուն համբերութեամբ բաժակը լեցուած է, ինչ պէտք է ընէ, վա՞նք մը քաշուի գինիին անուշութիւնովը պարտկելու իր ներքին դառնութիւնները, թէ նոր՝ Ղեւոնդի մը պէս հայ որբերու և այրիներու գլուխն անցած այդ արիւնկղակ և պիղծ գայլերը դուրս վանէ մեր սրբութիւններէն:

Ըսէ՛ք, Աստուծոյ պիտուն, հիմակուց ըսէք ձեր բարձր հանձարով և հեռատես մտքով՝ թէ հայրենիքի մէջ տակաւուր, շարժարող, անարգող, պղծող այս հայերը ինչ ընեն:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ, 28 Յուլիս

Ուր միաց կիրիկիոյ կաթողիկոսութեան խնդիրը, պիտի հարցնէ ընթերցողը. Ուր. Օրմանանի քիթին վրայ—ոչ հեռու, ոչ մօտիկ:

Գծադրող վեցանուն կամ եռանուն ցանկին խնդիրն է, մինչեւ օրս ատկէ անդին չեն անցեր:

Թուականս 15 օրի չափ առաջ կրօնական ժողովը գումարուեցաւ եւ սկսեցին ատ հարցը ձեռնել. շուրջ որքան կուզես ձեռնել, կրէք չի պնդանար:

Արդէն գրած եմ որ երկայնամիտն Արթին. Համբարի ամենէն ճարպիկ «տիպլոմաթը» երկար շարաթներէ ի վեր «տուէք ատ ցանկը» կը պոռայ: Տուէ՛ք... Ատկէ դիւրին ի՞նչ կայ: Արթինի ի՞նչ հոգի է թէ Ազգային շահեր կան, հայու համար ձեռնտու կրօնական աւանդութիւններ կան:

Օրման փաշա կը վարանի, տա՛լ, թէ չը տալ. Անոր գրութիւնը հոս իսկապէս Համբարի կան է, միայն քիչ մը համբարացած խողի մը գրութիւն:

Մանկունի եւ այլ քանի մը եպիսկոպոսներ բացարձակ դէմ են ցուցակ տալու: Չար լեզուներ կըսեն, որ անոնց «փորի ցաւը» ազգային շահերը չեն, այլ անձնական կիրքերէն ու հակառակութեան ոգիէն գրողուած կընեն աս գիմաւորութիւնը: Ի՞նչ ընեմ թէ ինչ ներքին միտումներու արդիւնք է անոնց ատ վարմունքը: Բաւ է որ ասօր չեն յիսխեար եւ «չեմ ընգունիր» կըսեն:

Տարբեր է Օրմանի «Համբարացեալ խողի» վիճակը, ան կը վարանի ցուցակ տալ, որովհետեւ վեց անունի մէջ եթէ իր գարշելի անունն ալ ըլլայ, չէ՞ որ հոս կրնայ ջնջուիլ Համբարի կողմէն: Ինչո՞ւ կը մոռնաք, ճանրմ, որ Օրման ասուած է ոչ թէ միայն հայէն, այլ եւ թուրք պաշտօնեաներէն: Կրնայ ըլլալ, որ կիրիկեցի ընտրողները խնթեանն ու զինքը ընտրեն, եթէ ցուցակ չի տայ: Բայց կրնայ եւ ատոր հակառակը ըլլալ: Ան ատե՛ն, է՞, կառավարութեան ալ սիրտը կտորել, ընտրողներէն ալ հարուածուիլ:

Վերջապէս, անցեալ կրօնական ժողովը չի կրցաւ իր մէջ համաձայնութիւն մը կայացնել եւ պաշտօնապէս գրեց կառավարութեան, որ «ժողովս չի կրնալով համաձայնութեան գալ՝ կը պաղատէ ամենաողորմած կառավարութեան թոյլատրել կատարել ընտրութիւնը ըստ հնուամիտ»:

Աս թուրքը գրուեցաւ, բայց թէ երբ պիտի պատասխան անեն, չեմ գիտեր:

Գրիստոսի ծննդեան 1900 թուի, Օգոստոս 19ին ըստ հին տոմարի, Համբարի գահակալութեան 25ամեայ տարեդարձն է:

Սե՛ւ ըլլար ան օրը. երբ հրէջ մը գահը ելաւ... 24 երկա՛ր ու ձիգ տարիներու շարք մը՝ ամէնքն ալ արիւնով ու սովով ներկուած: Եւ այն օրը ստրկացած, շնացած ժողովուրդներու խումբ մը պիտի տունէ գայն, պիտի փառաւորէ այն օրը, ուրկէ սկսուեցաւ իրենց տառապանքի

իրենց փնտրման, իրենց ընդհանուր կործանման ու քայքայման ամենա- էական շրջանը: Թուրքիոյ լայնա- ծաւալ պետութեան մէջ չը կայ ժողովուրդ մը, չը կայ փոքրիկ խմբակ մը որ աս 24 տարուան արեան թա- գաւորութեան շի տակ իր սրտին վրայ վէրքեր առած չըլլայ: Կը հեծէ թուրքը, կը հեծէ ֆուրքը, կը հեծեն Պէտէիւն ու Տիւրքիւն, Ալպանն ու Մակեդոնը, կը հեծեն Ասորիներն ու Եգիպտոսը, Կիւնուներն եւ Թիւրք- մէնները, Յոյներն ու Հայերը...

Հայը կը հեծէ՛, ոչ այդ քիչ է: Եթէ միւս ամէն ազգերու հեծկտանքը ու ամէնքը միասին մէկ է, հայունը միայն տասն է: Եթէ միւս ազգերը արցունք կը թափեն, հայու ար- ցունքը արդէն հասեր է, արիւն կուլայ, արիւն եւ ան ալ արդէն սպառելու վրայ է:

Բայց այս ամէն հեծկտացող ժողովուրդները, հրէշաւոր յիմարու- թենէ մը բռնուած, անասնական ան- զգայութիւնով մը ապուշցած՝ պիտի ածեն զիրենք ճգմագի, իրենց հոգին այրող-առողջի 25ամեակը:

Ու հայերս ալ պիտի մասնակցինք ատ տունին: Խառն ժողովը արդէն ուրոշում կ'այացուցեր է, ուղերձ, թան- կագին նուէր եւ այլն պիտի մատուց- ուին Համիտի այն ոտքերուն տակ, որոց վրայ դեռ թաց կը մնայ հայու- թեան սրտին տաք արիւնը, հայ կոյսերուն բռնաբարուած պատիւը:

Ու հայերս ալ պիտի հրճուինք Սուլթան Ապտուլ-Համիտ Խան Ազլիի 25ամեակ գահակալութեան ու փառա- հեղ թագաւորութեան տարեդարձին առթիւ... Սողունակա՛ն ստրկու- թիւն:

Կաթիւն-Պրասի սպաննեց Հոււ- պէրթօ թագաւորը, Համիտ սկսեց զոզալ, գրած էր անցեալ անգամ: Այժմ կուգամ աւելցնելու որ կայսե- րական թիկնապահներու թիւը կրկ- նապատկուած է. պալատի մէջ ամէն մարդկային արարած լրտես է: Իտա- լացիներուն դէմ խստութիւնները կրկնապատկուած են, ամէն իտալացի անարշիտ կը կարծուի: Սէլամըքի արարողութեան ներկայ եղող իրենց զեւսպանատուններէն յանձնարարուած Եւրոպացի հիւրերն ալ Համիտի հի-ւանդ ուղեղէն ազատ չի մնացին: Օ- տար հիւրերը, չի նայելով որ մաս- նաւոր տոմակներով կը յանձնա- րարուին իրենց զեւսպանատուններէն իբր վստահիչ անձեր, այնու ամե- նայնիւ որոշ ժամանակ միայն կրնան մնալ Սէլամըքի հիւրասենեակին մէջ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՄԻՏԿԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ՄԱՐԴ- ԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԻՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բ. (Շար. նախորդ քիւնէն)

Արդ՝ ինչէ՞ն է որ զարգացումն ու յատալգիմութիւնը նոյն չէ մտքին քուրթիւններուն համար, եւ խոշոր գանազանութիւն մը կայ բարոյական եւ նիւթական աշխարհներուն մէջ: Ինչէ՞ն է որ ճշմարտութեան ընթացքը որ այնքան արագ է մէկուս մէջ, միւսին մէջ հազիւ թէ կը նշմարուի:

անկէ ետքը կուգայ գոհիկ պաշտօն- եայ մը եւ ամէնքն ալ դուրս կը հանէ. չըլլայ թէ իր վեհապետին ազամանդէ կեանքը վառնալու... Կիսաւորն այն է որ ատ կարգադրու- թիւնը վերջին օրերս ըրուած է պա- լատէն, առանց նոյնիսկ դեպքանե- րուն նախօրօք իմաց տրուելու, գոնէ պարզ քաղաքավարութենէ մը դրո- ղուած:

Ճաւախը լուր մըն ալ հասաւ հոս Զարեհու մայրաքաղաքէն. Մոսկուա քաղաքի մէջ մեծեր է Պոլսոյ հայու- թեան լաւ յայտնի սուսահայ գրա- զէտ Ջանչեան:

Անարգած պիտի ըլլայի Ջանչեանի պէս հսկայ գրողի մը եւ լայն սիրա- բարբարի մը յիշատակը, եթէ զայն համեմատելու ելլայի Քիլիկիաներու, Արփիկապուտի եւ այլն դաւող գրող- ներու հետ: Բայց դրիչ կայ. որ սրբութիւն կը բղիւէ, մարբութիւն կը տարածէ. իտէլ կը քարոզէ, գրիչ ալ կայ որ—ներեցէք աս բառերուս— արտաքնոց կը հոտի, դաւաճանու- թիւն կը բուրէ, պատակաւու եւ որով կը սերմանէ:

Ճշմարիտ է, Ջանչեան սուսերէն կը գրէր, ուստի առաջադէմ երիտա- սարդութեան պաշտելի գրողներէն մէկն էր. բայց կրնար հանգուցեալը ըսել. «ես ալ հայ եմ»:

Հանգուցեալին հակայական եռան- դին 2—3 ամսուան արդիւնքն է ա- նոր խմբագրութեամբ եւ թէ ուսու- թէ օտար ազգի ամենէն հոշակաւոր գրողներէն խոստած յօդուածներէն կազմուած «Եղբայրական Օգնութիւն Վաստած թրքահայերուն» անունով ստուար հրատարակութիւնը: Աս միակ հրատարակութիւնով Ջանչեան կըր- ցաւ Թուրքիոյ մէջ բանայ եւ պահել 12 որբանոց, որոնց զրկած է 7000 սս- կիէն աւելի եւ որոնց նիւթականը դեռ եւս 4—5 տարի լաւ ապահով- ուած է:

Ջանչեանի կրակոտ գիմուը «Օգ- նել տանջուած եղբայրներուն» ար- ձագանգ գտաւ ոչ միայն Կովկասի ու Խրիմի հայութեան մէջ, այլ եւ ցըն- ցեց, հաւեցուց այնպիսի ստոյգ սիրտ մը ինչպիսին էր համալսարհային ծովանկար Այվազովսքիի սրտը: Ու աս օրէն Այվազովսքիին ալ սկսեց իր վրձինն նիւթ զարձնել Հայու ճա- ուղապնխը... Թէեւ բուսական ուշ: Լաւ է ուշ քան երբեք:

Ջանչեանի մահուան լուրը հասնե- լուն պէս կրօնական ու քաղաքական ժողովները սեսակ մը գաղտնի, կիս- րեւրան վճիռ մը կայացուցին—«հո-

այնպէս որ ամենահին սխալներ շա- րունակ կը կրկնուին, եւ մարդկային բանակաւորութիւնը բոլորովին անզօր է ճիշդ այն բաներուն մէջ, որոնք մարդկային երջանկութիւնը կը շօշա- փեն ուղղակի:

Ասոր պատճառը դիւրին է գտնել. Ոչ թէ բուն միտքն է անոր պատասխա- նատուն, այլ այն ուղղութիւնը զոր համովին կուտանք մտքին Եթէ մար- դիկ աւելի արագ ու ապահով կը յա- ուաջանան նիւթականի վերաբերեալ ճշմարտութեանց մէջ, պատճառը այն է որ, զանոնք կը փնտռեն ինչպէս որ պէտք է փնտռել, իրենց մտքին ը- լոր ուշադրութեամբ ու բոլոր կորու- վովը, իրենց աշխատութեան վարձքը անոնցմէ ակնկալելով, կը գործեն ի- րենց բոլոր ուղղամտութեամբ եւ ան- կեղծութիւնով, եւ չեն վախճար զա- նոնք յայտնելէ, երբ գտնեն:

գեհանգիստ մը կատարելու: Ու զգուշիկ, ու զարշնիկ է... Մէկ կողմէն հոգեհանգիստ կատարել հայու մը համար որը հայութեան սիրելի եղաւ Համիտի հրէշաւոր «բէ- ժմիւն» դէմ հրատարակած իր գրու- թիւններով, իր լայն մարդասէր- հայասէր ոգիով, իսկ միւս կողմէն իր թիւրքահայրնայն ձեռքը որ հա- յութեան սուրը քանդեց, որ անոր արիւն փսխել տուաւ ու կուտայ: Աս հրէշաւոր հակասութիւնը կրնայ գոյութիւն ունենալ, միայն Թուր- քիոյ մէջ...

Վերջապէս... Յրանսական դեւ- պանը յաջողեցաւ Բ. Դոնէն ու Երլ- աղզէն կորզել 50,000 թրքական սս- կին: Աս Յրանսայի հպատակներուն 1896ին հայկական խառնակութեան ատեն կրած վնասներու հատուցումն է: Հատուցուած եմ որ աս յուրը կայ- ծակի պէս պիտի տարածուի եւ միւս պետութիւններն ալ անմիջապէս պի- տի ուղին իրենց հպատակներու վնաս- ները, Համիտի աչքը լոյս:

Բայց չի մոռնանք որ Դեոպանը— Պ. Քոնսթան, աս այժմ առեր է լոկ ստորագրութիւն, թուրք մը որով պետութիւնը կընդունի այդ պարտ- քը... պիտի վճարէ, բայց ե՛րբ. Իհարկէ ոչ այնչափ կանուխ. եւ վա՛շ, եւ վա՛շ էֆէնիմ:

Իսկ վնասուած ընտանիքները ստակ կուզեն. Ուստի Պ. Քոնսթան վճուած է աս գումարի 35 0/0 բաժնել այժ- մէն վնասի աէրերուն. իր կտաւա- րութեան հաշուին, մինչեւ որ ամ- րողը գումարը գանձուի:

ԲԱԺ

ՄԱՍՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Մեր խոստմանը համաձայն ը- նենք փոքրիկ ու համեստ նկա- տողութիւննիս նոր թերթերու մասին:

Սկսինք Եգիպտոսէն. Հոն հա- յիւ թէ «Փարոս» մարեց իր լոյսը, եւ հա՛ա «Արշալոյս» ծագեցաւ, բայց մինչեւ վերջը մինակ չի մնաց եւ «Փիւնիկ» ածիւններէն ծնաւ «Նոր-Օր»:

Նեղոսի ափերուն վրայ բուսած այդ երկու հայ թերթերն ալ, որչափ կրցած եմ դատել ձեռքս

Նոյն կերպով չեն վարուի մար- դիկ բարոյական աշխարհի ճշմարտու- թեանց համար, որոնք կոչուած են սրտերը կառավարելու: Հոն իրար կը խառնուին կիրքերն ու շահերը, ու- ընք իրենց բոլոր ծանրութեամբ կուգան ճնշել մեր գատողութեանց կշիռքի վրայ եւ վերապահել մեր ու- յաղբութիւնը իր ճշմարիտ գիտակէ- տէն: Հոն կը հանդիպինք մեզի ան- հաճոյ ճշմարտութեանց եւ! սիրելի սխալներու զորս ախտով կը փայ- փայենք: Ու փոխանակ զմեզ ամրող ջողին ճշմարտութեան յայտնումին նուիրելու. հոն աւելի լայն տեղ մը կուտանք մեր մասնաւոր նախապա- շարութեանը, մեր քմահաճոյքնե- րուն, որով մեր գեղարդութիւնը կերպով մը պատժել կըլլայ մեր ան- հաստարմութեան:

Ասիկա հաստատուելու համար վերա-

հասած քանի մը թիւերէն, թէ արտաքինով և թէ ներքինով շաք կը նմանին իրարու:

Շատ չեն զբաւիր ընդհանուր հայութեան վերաբերող հարցե- րով և աւելի ընդարձակ տեղ կուտան իրենց ներքին գործե- րուն ու խնդիրներուն, երկարա- պատում յօդուածներով: Քիչ մըն ալ չափէն աւելի կը զբաղին քա- ղաքական կեանքով, թերեւս Ե- գիպտական կլիմային արդիւնքն է ասի:

Միայն փոքրիկ հարցում մը «Նոր-Օր» վարչութեան:

Գահիրէի Լսարան-Ընթերցա- տունը այդքա՞ն հարուստ պիւտե՞ ժը ունի, և կամ լիովին գործա- գրած է իր նպատակը, որ կիսա- շարածաթերթի մը հրատարա- կութեան կը ձեռնարկէ:

Կը վախճամ որ թերթը բնու մը ըլլայ այդ հաստատութեան վրայ և խանդութ անոր հաշիւ- ները:

Շատ ուրախ պիտի ըլլայի եթէ բաժանորդներու ստուար թուով մը օժտուած «Նոր-Օր» պարապը հանէր այս վախ: Եւ կամ եթէ այս մասին կանխաւ բան մը խոր- հած են ու ես կանգիտանամ՝ թող ներդա՛միտ ըլլան, որովհե- տեւ թերթին առաջին թիւը ձեռք չը կըցի անցնել:

Բարիկ մէջ՝ «Բանասէր»ն ու «Անահիտ»ն ետքը ունեցանք «Համալսարան»ը:

Համալսարան, խոշոր անուն, աչքիս առջեւ են անոր չորս թիւերը: Կիտական բաժինը իբր սկզբնաւորութիւններ և սկսնակի գործեր նախակրթարան կը հո- տին. և առանց մեծ խօսած ըլ- լալու կրնամ ըսել որ այդպիսի նախակրթարան մը մենք ալ կըր- նայինք հանել Պուլկարիոյ մէջ: Գալով գրական բաժնին՝ նախա- պատմական ծաղկոց մըն է լոկ:

Թերեւս «Համալսարան»ի վա- րիչները միտք ունին այդէն ըս- կանով ընթերցողները տարրա- կանէն բարձրացնել մինչեւ

ցականութեանց մէջ թափառելու հարկ չի կայ, Ասորիս կեանքի փորձառու- թիւնը մեզի լայնօրէն կրնայ գո- հայնել:

Ի՞նչ կընենք մեր գատողութիւնը կրթելու, մեր բանակաւորութիւնը գո- րացնելու, աշխարհի, երջանկու- թեան, կեանքի, բնկերութեան վրայ ճշմարիտ ու առողջ գաղափարներ ստանալու համար: Ճշմարտութիւն կը պոռոկու, երբ անիկա մեր շահե- րուն ու կրքերուն կը յարմարի. բայց երբ նշմարենք թէ ճշմարտութիւնը մենէ կը պահանջէ քիչ մը անձնազո- հութիւն, պզտիկ զոհողութիւն մը մեր եաստիքութեան կամ նոյնիսկ ծուլութեան, ալ մնաւ բարձր ամէն ճշմարտութիւն, Իսկոյն մութին մէջ կը թաղենք զայն, եթէ չի համարձա- կինք քայլէ ի բոց արհամարհելու կամ ոտնակոխ ընելու:

բարձրագոյն աստիճանը, կը պահանջենք սակայն որ կարճ կապեն իրենց շրջանները և շուտով տան մեզի գիտական աւելի լայն ու խոր ուսումնասիրութիւններ ու թարգմանութիւններ հրատարակային դասախոսութիւններու, ինչպէս պարտք կը գնէ վրանին թերթին անունը և ապրած միջավայրին. և երկրորդ բարձրագոյն գոյն թողուն գրական բաժինը:

Կը պահանջենք ու կը սպասենք:

Բայց բնաւ բան մը չէինք պահանջեր ու սպասեր Մանչեսթրի հովիւ հայր Զուլայեցիէն, որ ինքնաբերաբար կուգայ պահաս մը լեցունել, իր «Եկեղեցիոց կրօնաթերթով»:

Եւրոպա ուսած, Եւրոպա ապրող, Աստուածաբանութեան վարձպետ Տէր Հայրը աւանդութիւններու շրջան մը կը մշակէ իր թերթով:

Ինչ հարկ կայ երկար բարակ գրել անգոյ առաւելութիւններու վրայ, որոնք արդէն գիտական լուրջ հետազոտութեամբ ջընջուած են: Ինչու ծիծաղելի դառնալ, հայոց հին կրօնքին—նախապատմական շրջանին—ճշմարիտ աստուածապաշտութիւնը ըլլալը հաստատելու համար գիմել Նրեմիայի կողմին, միթէ չէ՞ք տեսներ որ Արարատեան թագաւորութենէն ու Ասքանզեան գունդերէն քիչ մը վարը կուգան Մարք, և անոնցմէ առաջ ալ ուրիշ այլազգիներ, ասոնք ամենքն ալ աստուածապաշտ էին:

Չէ՛, Տէր պապա չէ՛, մեր Եկեղեցւոյ վեհութիւնը այդպիսի աւանդութիւններու և ենթագրութիւններու վրայ չը կրթնիր, անիկայ բարձր է ու հպարտ, որովհետեւ շատ կանխէն նետած է վրայէն օտարին լուծը և այդպէս անոնց ոտնձգութիւններուն առաջը առած:

Եթէ իսկապէս փափաք ունիք օգտակար դառնալու՝ փոխան այդպիսի աւանդութիւններ — հին

մտքով—մշակելու և անմարսելի քարոզներու, աւելի ժողովրդականացած լեզուով՝ ընտանեկան, ընկերական, ազգային պարտականութեանց և բարոյականի դասեր տուէք:

Քանի մը տու ալ Վառնայի «Նաւիկ» մասին:

«Նաւիկ» խմբագիրներն ու յօդուածագիրներն արդէն մեծ մասամբ ծանօթ են «Նարժում» ընթացիկներուն, և պէտք չունին նոր յանձնարարականի: Սրմաքէշխանեան, Գամբար-Ղաւր, Աղաթա, Աճէմեան հոն կը գրեն իրենց յայտնի գրչով: Անոնց վրայ աւելցած է Յ. Ս. Փափազեան, մեր համակրելի գիտուն բարեկամը, որ ժողովրդական լեզուով և հետաքրքիր ոճով առողջապահական դասեր և գիտական տեղեկութիւններ կուտայ մեզ:

Ձգարտի աշխատի մատնանիչ ընելու ճաւղի առաւելութիւններն ու օգտակար կողմնին, քանի որ անոր խմբագիրներն ու աշխատակիցները բարեկամներս ըլլալով կրնայ ըսածս կողմնակցական ձրի գովեստ սեպուիլ, սակայն զանց չեմ կրնար առնել քանի մը գիտողութիւններս:

Նախ դեռ կը պակսին հոն պարբերական թերթէ մը պահանջուած գրական կամ գիտական խնդիրներու, ազգային և կամ ընդհանուր կեանքի և հարցերու խոր ուսումնասիրութիւններ, և երկրորդ բոլորովին աւելորդ կը գտնամ դպրոցական տղու շարագրութիւնները, որոնք որչափ ալ յաջողուած նկատուին, կամ կեղծ պիտի ըլլան և կամ փոխ առնուած ուստի աւելորդ են:

Այս փոքրիկ նկատողութիւններով կը բաւականամ, որովհետեւ միտք ունիմ քանի մը օրէն հոն հիւր երթալ և կը հասկնաք անշուշտ . . .

Ն Ա Ր Ժ Ո Ւ Ս

—)(—

ՆՈՐ ԸՆԹԵՐԳԱՐԱՆԸ

Տեար Յ. Կ. Պօնճուգեանի հրատարակած պատկերազարդ նոր ընթերցարանի Բ. տարին կարդացի:

Իբր բազմամեայ ուսուցիչ, պարտականութիւն կը դամ հրատարակու իմ կարծիքս յայտնել այս նոր դասագրքի մասին:

Մէկ քանի տարիներ առաջ պատրաստուած դասագիրք մը բացէք, անմիջապէս ձեր աչքին պիտի զարնեն անխնամ լեզուն և նիւթերուն տափակութիւնը. յօրինողին կողմէն բնաւ երբեք նշատի չեն առնուած ոչ ուսանողին տարիքը, ոչ ալ անոր մտաւորական հասունութիւնը. դասագիրքը յօրինած են պարզապէս յօրինելու մարմալէն բռնուած, և կամ նիւթական շահ մը ձեռք ձգելու նպատակով: Այս դասագրքին պատկանող հեղինակներէն առաջինը կը հանդիսանայ մեր մեծանուն Հայկաբան Գարագաշ, որ նիւթականը լոկ նկատի ունենալով՝ նետած է մէջ տեղ դասագրքերու շարք մը, բայց ցաւ է ըսել ասոնցմէ մեծագոյն մասը գրավածառներու դարակներուն մէջ յաւիտենականապէս փոշիի տակ մնալու դատապարտուած է այսօր:

Գասագիրք մը յօրինողին պարտականութիւնն է, ինչպէս կը պահանջէ մանաւանդ արգի ժանկավարժութիւնը, նախապէս ի նկատի ունենալ ուսանողին մտաւորական կարողութիւնը և ըստ այնմ որոշել նիւթերը և դասակարգել զանոնք. երկրորդ գործածել անհրաժեշտաբար այսօրուան աշխարհաբար լեզուն, որ ունի իր յատուկ ու մէկին կանոնները:

Ահա այս պայմաններուն տակ պատրաստուած գտայ Տ. Պօնճուգեանի յօրինած ընթերցարանի Բ. տարին:

Գասագիրքը պատրաստուած է յատկապէս Ազգ. կեդր. վարչութեան ուսումնական խորհրդոյ ծրագրին տարրական դասըն-

թացքի առաջին մասին համար, Լեզուն մաքուր, կոկիկ ու սահուն աշխարհաբար է. նիւթերը հետաքրքրական են գիւրքմբռնելի, բարոյալից, և ճարտարօրէն դասակարգուած:

Անկեղծօրէն կուգամ հրատարակու յայտնել թէ՛ այս ընթերցարանը ցարդ թուրքիոյ մէջ հրատարակուած նմանօրինակ դասագրքերուն վրայ մեծ առաւելութիւն ունի իր խնամեալ լեզուն և նիւթերու յաջող դասակարգութեան կրկնակ դեսակէտով և հետեւաբար ջերմապէս յանձնարարելի է արտասահմանի բոլոր ազգ. վարժարաններուն:

Ձերմաքին շնորհաւորութիւններս Ձեզ, Տիար Պօնճուգեան, որ ձեր ուսուցչական ծանրածանր զբաղումներուն մէջ ժամանակ գտած էք օգտակար հանդիսանալ ձեր այս նոր մէթօդիք երկասիրութեամբ մեր մատաղ սերունդին: Անհամբեր կսպասենք Գ. տարին սեպտեմբերէն առաջ լոյս ածանալուն, ինչ որ խոստացած էք արդէն ձեր յայտարարութեանը մէջ:

ՎՐՈՅՐ

Հ. Ս. ԷՓՐՈՒԿԵԱՆ

Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան

Այս հոյակապ գործին Բ. պրակն ալ հրատարակուած է:

Ա. պրակը զարգարուած 80 պատկերներով:

Բ. պրակը զարգարուած 91 պատկերներով:

Իւրաքանչիւր պրակ ճամբու ծախսով կարժէ 3 ֆրանք:

Հասցէ՝
Imprimerie Armenienne St. Lazare (Italie) Venise

Յ. Կ. ԲԱՍՄԱՉԵԱՆ

Բանասէր

Այս եռամսեայ հանդէսին Բ. հատորի Ա. պրակը հրատարակուած է:

Բանասէրի տարրական գիտն է 20 ֆրանք. մէկ գիրքը 6 ֆրանք:

Հասցէ՝
Basmédjian
112 Bd Bochechouart Paris

—)(—

Մեր այս թուրքական պատճառը մեզի տրուած թերի դասախարակութիւնն է. Ասոր համոզուելու համար թող այքի առջեւ թրէ ամէն մարդ իր անցեալը, յիշէ թէ ինչպէս կեանքի կուրծն մէջ նետուած է:

Վերվերոյ դաստիարակութենէ մը ետքը, որ եթէ միտքը ամբողջովին դատարկ չէ ձգած, գոնէ սխալ ու անիրական գաղափարներու խառնուրդովը խճողած է. պատանին կը մտնէ այն հասակին մէջ ուր երիտասարդական կերքերը կեռուզեցին իր երակներուն մէջ. շատերու միտքը կը պաշարուի լոկ այս մոլեգին կըրքերու պայթումով. այնպէս որ իրենց բոլոր կորովը կը սպառի զգայարաններու այս անկարգ ու անբնական յափրանքէն: Յետոյ արմուղ կեանքի այս առաջին փորձէն ետքը, ուր անհամար երիտասարդներ կ'իյնան յու-

սահատ, հասուն տարիքը կուգայ. պէտք է գործով մը զբաղել, դիքք չինել, ինքզինքը և իր ընտանիքը պահել՝ ապագայ մը ապահովել իրեններուն: Եւ այս բոլոր զբաղմանց միջոցին մարդ շատ քիչ անգամ ժամանակ կը գտնէ հոգին ու միտքը զօրացնող բաներու վրայ խորհելու: Իր ամբողջ միտքը ու խելքը կեդրուացած է աւելի անմիջական շահերու և պէտքերու վրայ. հացի խնդիրը, կեանքի պայքարը անհրաժեշտ կը զբաղեցնեն զինքը. փառքի, դրամի մեծութեան ետեւ է ան, որովհետեւ հոն պիտի գտնէ այսօր իր ու իրեններուն հանգիստը:

Ու ահա ծերութիւնը իր գուռը կը հասնի. պէտք է մահուան պատրաստուել հիմայ, այնինչ դեռ նոր նշմարել սկսած էինք ինչ որ պէտք է գիտնալ ու ընել երջանիկ

ապրելու համար: Եւ սակայն շատեր նոյնիսկ ծերութեան մէջ, փոխանակ լրջօրէն զբաղելու կեանքի փորձառութեամբ, իրենց վերջին տարիները կանայնեն անցեալին ցաւով և անհեռացած քիչ փառքերու վերջիչումով:

Մեր ամէնքնուս կեանքին մէջ կարելի է գտնել այս խուսափուկ կիրքերու հետքերը, և ո՞վ է մեղաւորը. երբ ճշմարտութիւնը մենէ կամովին լքանել է ու արհամարուել է ետքը, խոյս կուտայ ու վրէժ կաննէ փոխադարձաբար, զմեզ առանձին ձգելով մեր կամաւոր սխալներուն հետ:

Ո՞վ է մեղաւորը, երբ մարդկային միտքը միշտ անզօր կը մնայ ճիշդ հոն ուր ամենէն աւելի իր տիրապետութիւնը անհրաժեշտ է, և երբ անոր բոլոր յաղթանակները միշտ

մարդը աւելի խորապէս միտին ու նիւթին վայելքին մէջ կը թաղեն:

Պէտք է փոխելը նախ մտքերու. դաստիարակութեան ձեւը: Մտքին ու յատնալիութեան ամենամեծ ու է՛ն ահաւոր թշնամին տգիտութիւնն է, և ամենէն ճշմարիտ յաղթանակները, անոնք՝ զորս մարդ կատարած ըլլալու զղջումը երբեք չունենար, ինչպէս ըսած է Նարդէն, այն յաղթանակներն են, որոնք կը տարուին տգիտութեան դէմ:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՒՍԵԱՆ

Ձիւլպէ, 25 Յուլիս

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Խառն ժողովը վերջին շաբաթուա չէ կրցեր հիստ կազմել իր անդամներու մեծ մասին բացառականութեանը պատճառով: Պատրիարքն ալ Գառական նախարարութեանէն նոր եկած պաշտօնագրին ընթերցումը յետաձգել է յաջորդ նստին:

— Սուլթանի գահակալութեան 25ամեակին առթիւ արուելիք ուղերձէն զատ Պատրիարքը նուէր մըն ալ պիտի տայ, որ արժէքաւոր հնութիւն մըն է եղեր իր տեսակին մէջ և Պոլսոյ պատմական փառքերէն մէկուն մանրանկարն է ոսկիով և արծաթով ձուլուած: Պատրիարքը քանի մը օրէ ի վեր առ տարեգարձին նախապատրաստութեամբ կը զբաղի: Անշուշտ ականջները խփած Հայաստանէն եկած աղիողորմ լուրերուն:

— Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց Առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոս Տէրունեան յայտարարութիւն մը հանած է, նոր-ձուղայի և շրջակայ գիւղերուն ուղղուած, որով կը յայտնէ թէ շատերը հարստանալու համար Հնդկաստան կը գիմեն, բայց ընդհակառակն հոն աղքատութեան կը մատնուին. ուստի կը պատուիրէ որ ետ կենան այդ հասանքին մէջ նետուելէ:

— Ակնայ նախկին Առաջնորդ Յարիկեան Յակոբ վարդապետ, որ իր ծերութեան օրերուն մէջ առանձնացեր էր Երուսաղէմի վանքը, վերջերս վախճաներ է: Հանգուցեալը մեռնելէն քանի մը օր առաջ խոստովանահայր մը կը կանչէ քովը և անոր կը յանձնէ թուղթերու ծրար մը, որով իր Ակնայ մէջ ունեցած մէկ խանութը և մթերանոցը կը թողու քաղաքին աղքատներուն:

Նաեւ իր քովը գտնուած 160 ոսկիի գումարն ալ կը թողու Երուսաղէմի վանքին:

Ասանկ են մեր եկեղեցականները, մինչեւ որ մահուան շի մօտենան և կամ չի մեռնին չեն կարող բաժնուիլ իրենց սիրական գոյքերէն և գրամէն, եթէ բնաւ պէտք ալ չունենան անոնց:

— Էջմիածնի միաբաններէն Գատեան Խաչիկ վարդապետ՝ որու աշխատութեամբը հիմնուած է Էջմիածնի հնագիտական թանգարանը, Բէթրապուրկի հնագիտական ընկերութեան միջոցով, օրինական ճամբով ամէն տեղ խուզարկութիւններ ընելու արտօնութիւն ստացեր է:

Վերջին օրերս այդ վարդապետը կաթողիկոսին հրամանով Առապարի Զուարթնոց եկեղեցւոյն մէջն ու շուրջը սկսեր է պեղումներ ընել տալ:

Հողին տակէն մեծ քանակութեամբ մողայիգներ և քարեր

գտնուել են, որոնց վրայ գունաւոր պատկերներու հետքեր կը գտնուին եղեր: Աւերակներու տակէն սրենայներ և խոյակներ երեւան եկեր են, որ է. պարուն մէջ քանդակագործութեան որչափ զարդացած ըլլալը կը բացատրեն:

Այս պեղումները գեռ կը շարունակուին:

— Տասեան Արթին փաշա ծանրագէտ հիւանդ է կը գրեն Պոլսոյ թերթերը:

— Ռուսմանհայ գեղագործ Անտոն Ալթունեան Ռուսիան կառավարութեան կողմէն պատուիրակ ընտրուել է Ռուսմանիան ներկայացնելու Բարիկի գեղագործական համաժողովին մէջ: Երջեալն արդէն Պուքրէշի քաղաքագետական խորհրդին անդամ և գահածառանգին մատակարարն է:

— Գարձեալ Պուքրէշի մէջ Գէորգ Գաբրի հայազգին կրթական նախարարութեան գիւնապետ ընտրուել է:

— Թէոդոսիայի Բաղաքապետական խորհուրդը թոյլտուութիւն ստացեր է ամբողջ Ռուսիոյ մէջ հանգանակութիւն կատարել Այվազովսկիի համար արձան մը կանգնելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ ՈՒ Ր Վ Ի Ա

Վերջին օրերս Երոպական թերթերը կը գրէին թէ Սուլթանը իր պարտէզին մէջ պտոյտի ատեն նուազած ինկած է, և ծանր վիճակի մէջ կը գտնուի եղեր: Բայց Պոլսէն եկած նոր տեղեկութիւններ սուտ կը հանեն այդ լուրը և կրեն թէ Սուլթանի առողջութիւնը կատարեալ է և միշտ ունի նորութիւններ կուտայ:

— Պոլսոյ Անգլիական դեսպանը Սասնոյ կողմերը կատարուած նոր շարդերուն համար խիստ կերպով բողոքել է Բ. Գրան:

Բ. Գրանը պատասխանելով անոր ըսեր է՝ թէ պաշտօնական տեղեկութեանց նայելով պատահածները լոկ հայ աւազակներու դէպքեր են, և սպաննուած են անոնցմէ 18 մարդ և անոնք ալ անձնասպան եղած են (զարմանալի աւազակներ): Եւ կաւելցնէ՝ եթէ կատարուած խժգժութիւնները հաստատուին թուրք կառավարութիւնը պիտի պատժէ յանցաւորներն:

Անշուշտ թուրքի պատիժով, շքանշաններով և աստիճաններով պատուելով դահիճ պաշտօնեաները:

— Վանայ Անգլ. հիւպատոսը իր թարգմանին ընկերակցութեամբ նահանգին մէջ պտոյտի մը ատեն 150 ի չափ քերտերու

կողմէ յարձակում մը կը կրէ: Բիւրտերը անոր ամէն գոյքերը կը գրաւեն և թարգմանն ալ կը վերաւորեն:

Հիւպատոսը անմիջապէս կը բողոքէ տեղւոյն կառավարութեան, որ վաշտ մը զօրք կը զրկէ աւազակներուն հտեւէն:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Գանակից բանակները Բէի-Չանկը գրաւելէ ետքը նոր յաղթութիւններ ալ տարած են Էրնացոց վրայ:

Անգլիական և Ամերիկեան բանակները յարձակել են Եանկ-Չունկի բնականէն ամուր Չինական գիւղերին վրայ:

Չինացիք բաւական դիմագրելէ ետքը փախուստ տուած են: Մանչուրիոյ մէջ Ռուսները հետզհետէ գրաւել են Նիւ-Չունկ և Նարպէն:

— Օտեսայէն կը հեռագրեն Եւրոպական թերթերուն՝ թէ Եւրոպական Ռուսիայէն 50,000 նոր զօրքեր պիտի զրկուին Մայրագոյն Արեւելք:

— Բէրլինէն Յիւստական հիւպատոսը կը հեռագրէ իր կառավարութեան՝ թէ դեսպանական մարմինը այն ատեն միայն պիտի թողու Բէրլինը. երբ Չինական կառավարութիւնը ապահովութիւն տայ 800 Եւրոպացիներուն և 3000 Բրիտանացի Չինացիներուն կեանքին համար:

— Լի-Նունկ-Չանկ լիազօրութիւն ստացեր է իր կառավարութեան խաղաղութեան համար բանակցիլ Գանակից պետութեանց հետ:

— 3,000 Աննամցի զինուորներ ճամբայ ելած են Չինաստան երթալու Յիւստական կառավարութեան պաշտպանելու համար:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐԵՐ

Վիկտոր Էմմանուէլ Գ. օգոստոս 11ին (ն. Տ.) հանդիսաւորապէս իր երգումը ըրեր է Խորհրդարանին մէջ, և իր անդրանիկ գահաճառին մէջ շատ մը սովորական դարձած խօսքերէ ետքը աւելցուցեր է, «Չօրեղապէս պիտի պաշտպանեմ Իտալիոյ ազատական հաստատութիւնները և անպաշար պիտի աշխատիմ հայրենիքիս մեծութեանը և բարգաւաճմանը համար»:

— Լօրէնցօ-Մարքիզէն, Պօէր աղբիւրէ եկած լուրերէ կիմացուի որ, Լիթտէմպուրկի և Միտէլպուրկի մէջ մեծ պատերազմ մը կատարուել է:

Անգլիացիները ստիպուել են ետ քաշուիլ 500 մեռեալ և վիրաւոր թողլով:

Գարձեալ Պօէրները կարգ մը յաջողութիւններ ունեցել են Օրանսի մէջ, և կարեւոր դիւրքեր ձեռք անցուցել են նորէն:

— Բրէթօրիակէն կը հաղորդեն «Տէլի-Նիկզոի թէ Պօէրական զաւաղութիւն մը երեւան եկեր

է հոն. որուն նպատակն է եղեր կոտորել Բրէթօրիա գտնուած բոլոր Անգլիական սպաները և գերել Լօրտ Ռօպէրտսը: Դաւադիրներէն 10 մարդ ձերբակալուած են:

— Տօքթ. Համլին, Ռօպէրթ-Քօլէճի հիմնադիրը մեռել է իր ծննդավայր՝ Քօքլիէնտի մէջ (Մ. Նահանգներ): Հանգուցեալը 28 տարեկան եղած ատեն եկած է Թուրքիա և 40 տարի աշխատած է հոն, մասնաւորապէս Պոլսոյ մէջ:

— Ռուսացի մէջ ամառս 2ին կարկուտ տեղացեր և շատ մը ֆիսաներ պատճառել է. կրտսի թէ մարդու ալ կորուստներ կան: Մանրամասնութիւն կը պակսի:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Չ. քաղաք, Համ. — Չեր յօգուածը ուշ ընդունեցինք և որովհետեւ արդէն նոյն մտքով հրատարակութիւններ եղան Շարժումի մէջ, ձերինը չի պիտի կրնանք հրատարակել:

Թերթերը մենք կանոնաւորապէս կը զրկենք յանցանքը փոստին է:

Յօքշան. Վ. Մ. — Չեր զրկած դրամը ընդունած ենք:

Գ. — Ստացանք ձեր զրկած 15 ֆրանքը:

ՀԱՅԿԱՎԱՆ ԿՐԹԱՐԱՆ

Գ Ի Շ Ե Ր Օ Ր Ի Կ Ե Ի Տ Ե Ր Ե Կ Ե Ա Ս Ե

Վարժարանիս աշակերտ տալ փափաքող պատուարժան ծնողաց կը յայտարարեմ որ, Հայկական կրթարանի Գ. ասրիչընը կսկի յառաջիկայ սեպտեմբեր 1/14ին, միեւնոյն ընդարձակ եւ օդանուն չէնքին մէջ, ատանց փոփոխման ծրագրի եւ աշակերտութեամբ միեւնոյն ուսուցչական մարմին, որուն պիտի ընկերանայ նաեւ ֆրանսացի ընդհանուր հսկող մը:

Լրացուցիչ դասընթացքի աշակերտներուն համար ուսման առարկաներու մեծագոյն մաս մը պիտի դասախօսուի ֆրանսերէն լեզուով, Դասաւանդութեան միեւնոյն եղանակը, աւելի նեղ սահմանի մէջ եւ աստիճանաբար, ի գործ պիտի դրուի բարձրագոյն ու միջին դասընթացներուն համար ալ:

Ուսմանց ու գիտութեանց բոլոր կարեւոր ճիւղերը կաւանդուին:

Օտար լեզուներէն պարտաւորիչ են Պուլկարիերէնը եւ Յիւստերէնը, իսկ կամուար են Անգլիերէնը եւ Գերմաներէնը, որոնք պիտի աւանդուին Յիւստերէնով:

Չութակի եւ գանակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումներով: Գիշերօթիկներու համար առողջ սնունդ, կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք:

Տարեթոշակներու համար պատրաստ եմ ամէն գիւրութիւն ընծայել, եթէ անոնց կանոնաւոր վճարումը կանխաւ ապահովուի՝ եւ է միջոցաւ:

Հայկական կրթարանի
Հիմնադիր-Տնօրէն
ԿՐՕՆ ՄԻԿԱԵԼԵԱՆ